ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

07.06.2016 15:39

Հունիսի 7-ին ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հուշագիրը ստորագրել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը շնորհավորել է երկու իրավապաշտպան կառույցներին հուշագրի ստորագրմամբ որակական նոր հարթակի վրա դրված համագործակցության առթիվ: Անդրադառնալով Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին՝ նա համագործակցության համար առանձնացրել է ՄԻՊ-ի լիազորությունների այն շրջանակը, համաձայն որի Մարդու իրավունքների պաշտպանն անարգել կարող է այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք ու քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ: Պալատի նախագահը կարևորել է նաև այն, որ ՄԻՊ-ը կարող է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան ներկայացնել օրենքների նորմերի սահմանադրականությանն առնչվող դիմումներ: Նա հիշեցրել է, որ քաղաքացին կարող է ՍԴ դիմել, եթե սպառում է ներպետական երեք ատյանները՝ հավելելով, որ այս տեսանկյունից հուշագրով ամրագրված համագործակցությունը նպաստելու է Մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր գործին: Արա Զոհրաբյանը նաև խոսել է փաստաբանների կողմից բարձրաձայնվող՝ սահմանափակած վայրերում Մարդու իրավունքները խախտելու, նաև խոշտանգման դեպքերից: Նա շեշտել է, որ այդ պարագայում փաստաբանները հնարավորություն կունենան ՄԻՊ դիմելու միջոցով արագ արձագանքման խմբով արձանագրել նմանատիպ դեպքերը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, շնորհավորել է ներկաներին հուշագրի ստորագրման կապակցությամբ՝ նշելով, որ այն նոր որակ է բերելու Պալատի հետ համագործակցությանը: Նա ընդգծել է, որ ի տարբերություն սովորական հուշագրերի, այս հուշագիրը ցանկությունների ամբողջություն չէ, այլ՝ համագործակցության կոնկրետ մեխանիզմների ներդրում: Պաշտպանն ասել է, որ Փաստաբանները մեր երկրի ժողովրդավարական ինստիտուտների կարևոր տարրերից են: Նա նշել է, որ փաստաբաններն առանձին գործերով իրավաբանական օգնություն ցուցաբերելիս՝ բախվում են խնդիրների, որոնք Մարդու իրավունքների պաշտպանի հետաքրքրության տիրույթում են: Առանձնացնելով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համար հուշագրում առկա առաջնահերթությունները՝ Արման Թաթոյանը կարևորել է Փասաբանական դպրոցում ունկնդիրների համար ՄԻՊ աշխատակազմի կողմից դասընթացներ վարելու հնարավորությունը, ինչը թույլ է տալու ՄԻՊ-ին ավելի ակտիվ ու լիարժեք ինտեգրվել իրավապաշտպան հանրության ոլորտ:

Հուշագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից:

Բեռնել հուշագրի տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏ ՄԱՄՈՒԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏ ՄԱՄՈՒԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })